ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 01.02.2021Թ. ԹԻՎ 15-Լ ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՎՐԻՊԱԿՆ ՈՒՂՂԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 25-րդ հոդվածի 5-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով,

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ, նաև՝ Պալատ)** նախագահի 01.02.2021թ. թիվ 15-Լ որոշման՝

- 2.2 ենթակետով սահմանվել է, որ Պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2021 թվականի փետրվարի 6-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի **փետրվարի 11-ին,** սակայն նույն որոշման թիվ 1 հավելվածի՝ Պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևի տեքստի 2-րդ կետում թեկնածուների առաջադրման (ինքնաառաջադրման) **ժամկետը նշվել է փետրվարի 12-ը,**

- 2.3 ենթակետով սահմանվել է, որ Պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2021 թվականի **փետրվարի 12-ից**, սակայն նույն որոշման թիվ 1 հավելվածի՝ Պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևի տեքստի 3-րդ կետում թեկնածուների առաջադրման (ինքնաառաջադրման) **ժամկետը նշվել է փետրվարի 11-ը,**

նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայտնաբերված վրիպակները տեխնիկական բնույթի են և, դրանց ուղղման դեպքում Պալատի նախագահի 01.02.2021թ. թիվ 15-Լ որոշման տեքստի բովանդակությունը չի փոխվում,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. *Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.02.2021թ. թիվ 15-Լ որոշման թիվ 1 հավելվածի՝ Պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևի տեքստի՝*

*1.1. 2-րդ կետում «**փետրվարի 12-ին»** բառը և թիվը փոխարինել «**փետրվարի 11-ին»** բառով և թվով,*

*1.2. 3-րդ կետում «**փետրվարի 11-ից»** բառը և թիվը փոխարինել «**փետրվարի 12-ից»** բառով և թվով:*

2. *Աշխատակազմի ղեկավարին՝ խմբագրված ծանուցումը կրկին ուղարկել փաստաբանների էլեկտրոնային հասցեներին:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

09 փետրվարի 2020թ.
թիվ 19-Լ
ք. Երևան